երկու հարիւր և քսան ղուռուշ դրամն հռոմոց գանգատողն ոչ լցոյց 'ի ձեռն այս յանդիմանողիս եթէ ոչ միայն ղուռուշ հարիւր և ութսուն, և 'ի մնացորդ քառասուն ղուռուշն ուխտեաց զի միջոցաւ մի ամսով տացէ այս դատախազիս երկու լիտր քղամիտ, որում հարկաւոր իւր յօրինելոյ ուռկայն ձկնորսի իմոյ, և այս դատախազս ընդունելով այս պայմանի և հաւատալով ուխտադրութեանն գանգատողին ձեռնադրեցի թուղթն վաշխապարտից բովանդակեալ երկու հարիւր և քսան ղուռուշի և յանձնեցի գանգատողին՝ յուսալով զի 'ի միջոց միով ամսաւ գտից քղամիտն և ընթացից 'ի գործ ձուկ յորսի, այս անիրաւ գանգատողս ոչ միայն թուլանալով անցուց սահման ժամանակին ուխտադրութեան իւրոյ, որ ոչ յանձնեաց քղամիտն մինչև անցաւ ժամանակն տարուն ձուկ որսելոյ, և եղև ծայրագոյն վնաս այս դատախազիս, որ վնասս այս մի լինիցի պակասագոյն քանթէ երեսուն դրամ երծաթ հայոց, նա ևս յետ վեց ամիս ժամանակէ յուղարկեաց խոստացեալ քղամիտն իւր, որ տեսաք և հաստատեցաք զի էր փթեալ որ ոչ էր արժանի ոչ ինչ իրաց, բազմիցս անգամ պատգամօք, և բամբկաձոր գնացող արամբ գրեցաք առ գանգատողն և ազդ նմայ արարաք զի քղամիտն իւր փթեալ է, և այս դատախազս ոչ յանձն առնու և ոչ ընդունի փոխանակ քառասուն ղուռուշի, այս գան-